ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբեր 2022

Բովանդակություն

Բովանդակություն 1

Ֆինանսական դիրք 2

Վարկային պորտֆել և համեմատականներ 3

Տրամադրված վարկերի ծավալը 3

Տրամադրված վարկերի քանակը 3

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ 5

Վարկերի կառավարում 6

Վերլուծական գործակիցներ 7

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2022թ.-ի Նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել են 172.33 մլրդ դրամ՝ 2021թ.-ի Նոյեմբերի նկատմամբ աճելով 4.8%-ով, իսկ
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2022թ.-ի Նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 132.59 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Նոյեմբերի նկատմամբ աճելով 8.3%-ով, իսկ 2022թ. Հոկտեմբերի նկատմամբ՝ 1.1% (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2022թ.-ի Նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 60.3 մլրդ դրամ՝ 2021թ.-ի Նոյեմբերի նկատմամբ աճելով 15.2%-ով, իսկ 2022թ.-ի Հոկտեմբերի նկատմամբ՝ 1.2%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2021-2022թթ. Նոյեմբերի վերջի դրությամբ



Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2022թ.-ի Նոյեմբեր ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 9. 6 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 7.2%-ով, իսկ 2022թ.-ի Հոկտեմբերի նկատմամբ աճելով 10.8%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2021 և 2022 թթ.-երի Հունվար-Նոյեմբեր ամիսներին տրամադրված վարկերի ծավալը



Տրամադրված վարկերի քանակը

- 2022թ.-ի Նոյեմբեր ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 34,350 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 25.7%-ով, իսկ 2021թ.-ի Նոյեմբերի նկատմամբ՝ 57.7%-ով (Գծ. 3):
- 2022թ.-ի Նոյեմբեր ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 155,587 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2021թ.-ի Նոյեմբերի նկատմամբ աճել է 5.6%-ով, իսկ 2022թ. -ի Հոկտեմբերի նկատմամբ՝ 2.5%-ով:

- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2022թ.-ի Նոյեմբերին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 279 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 852 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2021թ.-ի Նոյեմբերին կազմել են համապատասխանաբար՝ 474 և 831-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2021 և 2022 թթ.-երի Հունվար-Նոյեմբեր ամիսներին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2022թ.-ի Նոյեմբերի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 155 մասնաճյուղ, որը, համեմատած 2021թ.-ի Նոյեմբերի հետ, նվազել է 2-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2022թ.-ի Նոյեմբերի դրությամբ ունեցել են 476 վարկային մասնագետ, որը, համեմատած 2021թ.-ի Նոյեմբերի հետ, նվազել է 66-ով:
- 2022թ.-ի Նոյեմբերին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 20.12 մլն դրամ, նախորդ ամսին՝ 17.65 մլն դրամ, իսկ 2021թ.-ի Նոյեմբերին այս ցուցանիշը կազմել է ևս 19.05 մլն դրամ (Գծ. 5):
- 2022թ.-ի Նոյեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 278.56 մլն դրամ, նախորդ ամսվա 267.59 մլն դրամի և 2021թ.-ի Նոյեմբերին 225.89 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2022թ.-ի Նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 1,647 մլն դրամ, նախորդ ամիս՝ 2,182 մլն դրամ և 2021թ.-ի Նոյեմբերին՝ 1,736 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 5.1%-ով, իսկ 2022թ.-ի Հոկտեմբերի նկատմամբ՝ 24.5%-ով: 2022թ.-ի Նոյեմբերի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.24%-ը, 2021թ.-ի Նոյեմբերին ևս կազմել է 1.42% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2022թ.-ի Նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 3,357 մլն դրամ, նախորդ ամիս՝ 2,809 մլն դրամ և 2021 թ.-ի Նոյեմբերին՝ 5,519 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 39. 2%-ով, իսկ 2022թ.-ի Հոկտեմբերի նկատմամբ աճել է 19.5%: 2022թ.-ի Նոյեմբերի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը

կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 2.53%-ը, 2021թ.-ի Նոյեմբերին՝ 4.51% (Գծ. 6):

- **Զուտ դուրսգրումներ:** 2022թ.-ի Նոյեմբերի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 1,629 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,559 մլն դրամ և 2021թ.-ի Նոյեմբերին՝ 14,204 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2022թ.-ի Նոյեմբերին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 4.5%-ով, իսկ 2021թ.-ի Նոյեմբերի նկատմամբ նվազել է 88.5%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Նոյեմբերի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 1.23%-ը, նախորդ ամսվա 1.19%-ի և 2021թ.-ի Նոյեմբերի 11.60%-ի համեմատ (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Նոյեմբերի 30-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2022թ.-ի Նոյեմբերի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 76.9%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Նոյեմբերին կազմել է 74.4% (Գծ. 7):

- Սույն թվականի Նոյեմբերի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 45.5%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 46%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Նոյեմբերին կազմել է 42.8% (Գծ. 7):
- 2022թ.-ի Նոյեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 35.0%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Նոյեմբերին կազմել է 31.8% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2022թ.-ի Նոյեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.86, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 1.9 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Նոյեմբերի համար կազմել է 2.14:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ




Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը
38.000,0
36.000,0
34.000,0
32.000,0
30.000,0
28.000,0
26.000,0
24.000,0
22.000,0
20.000,0
18.000,0
16.000,0
14.000,0
12.000,0
10.000,0
8.000,0
6.000,0
4.000,0
2.000,0
-
21.788
26.110
23.094
24.271
28.515
26.805
26.675
28.112
23.917
25.687
25.393
27.323
34.350
Nov-21
Dec-21
Jan-22
Feb-22
Mar-22
Apr-22
May-22
Jun-22
Jul-22
Aug-22
Sep-22
Oct-22
Nov-22


Ժամկետանց վարկերի դինամիկան 11/2021-11/2022
PAR 1-30 days
PAR more than 30 days
6.000.000
5.000.000
4.000.000
3.000.000
2.000.000
1.000.000
-
Nov-21
Dec-21
Jan-22
Feb-22
Mar-22
Apr-22
May-22
Jun-22
Jul-22
Aug-22
Sep-22
Oct-22
Nov-22